ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

ՀՀ Արմավիրի մարզ
Երասխահուն համայնք
04403792
թիվ 119
23-11 - 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ
Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի ավագանու նոյեմբերի 23-ի թիվ նիստի որոշումներն և բյուջեն :

Առդիր 44 թերթ

ԵՐԱՍԽԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Մ-22790-2020
30 11 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2020թվական | № 15Ա որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 5-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 23-ի նիստի օրակարգը համաձայն հավելվածի
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ` ԿՈՂՄ( 5 ) ԴԵՄ ( 0 )

| <u>ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ</u> | ԿՈՂՄ/ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ |
|---|---|
| 1.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ | ............ |
| 2.ԲՈՒԴԱՂՅԱՆ ԳԵՎՈՐԳ | ............ |
| 3.ՍԱՂՈՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ | ............ |
| 4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ | ............ |
| 5.ՓԱՆՈՍՅԱՆ ՂԱԶԱՐ | ............ |

ԵՐԱՍԽԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ / / Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 23
գ. Երասխահուն

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Երասխահուն գյուղական
համայնքի ավագանու
2020թվականի նոյեմբերի 23 - ի
N 15 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N -15 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2020թվական — № 16Ն որոշում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» << օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի ավագանու 2020թվականի հունվարի 14-ի «Երասխահուն համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 3 Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի 1-ի :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ ԿՈՂՄ( 5 ) ԴԵՄ ( 0 )

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ/ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ |
|---|---|
| 1.ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ | |
| 2.ԲՈՒԴԱՂՅԱՆ ԳԵՎՈՐԳ | |
| 3.ՍԱԴՈՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ | |
| 4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ | |
| 5.ՓԱՆՈՍՅԱՆ ՂԱԶԱՐ | |

ԵՐԱՍԽԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ / / Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի

ավագանու 2020 թվականի

որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽԱՀՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի բյուջեում ավելացնել եկամուտ պետբյուջեից տրամադրվող այլ դոտացիա տող 1256 265.0հազ դրամ.

01.1.1 -- 4214 հոդվածին ավելացնել 65.0 հազ դրամ

05.1.1 -- 4213 հոդվածին ավելացնել 200.0 հազ դրամ

04.2.4 - - 5113 հոդվածից պակասեցնել 1000.0 հազ դրամ, ավելացնել 04.5.1 -5113 հոդվածին

09.4.1 -- 4729 հոդվածից պակասեցնել 400.0 դրամ ավելացնել 01.1.1 - 4261 հոդվածին

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 14-ի N3-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երասխահուն համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 14-ի N 3-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, մասնավորապես՝ Նախագծի անվանման մեջ նշել «ՈՐՈՇՈՒՄ» բառը:

2. Նախագծի նախաբանում «34-րդ հոդվածով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «34-րդ հոդվածի» բառերով:

3.Նախագծի 1-ին կետն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ «Երասխահուն համայնքի 2020 թվականի բյուջեում ավելացնել եկամուտ պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիա 1 325 100ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 2-ի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «և հավելված 2-ի» բառերով:

4. Հարկ ենք համարում ընդգծել, որ եթե ներկայացված նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ

համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող նախագծի հավելվածների տեսքով: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, մասնավորապես՝ նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին): Այդ առումով հավելվածների դրույթներն անհրաժեշտ է նախատեսել աղյուսակների տեսքով:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5 րդ մասի համաձայն՝ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:

Վերոգրյալ կարգավորումների լույսի ներքո փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը: Այսինքն՝ համայնքի բյուջեում կատարվող ցանկացած փոփոխության ժամանակ անհրաժեշտ է նախագծի հիմնավորման մեջ հստակ նշել, թե ինչ ուղղություններով և ինչ

նպատակով են ավելացվում կամ նվազեցվում բյուջեի ծախսերը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝**

11/2/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

**ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ**